ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Արագածոտնի մարզ, գյ. Շամիրամ, 1-ին փողոց , 24 շենք ,

Հեռ. 093-43-43-58 , mraz.broyan@mail.ru

N 43 23.09.2013թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան.

Ձեզ է ուղարկվում Շամիրամ համայնքի ավագանու 13.09.2013 թվականի թիվ 10 արտահերթ նիստի Արձանագրությունը և որոշումները:

Առդիր 6 էջ:

Ստաց
<< Արագածոտնի մարզպետարանի
«Շիրակացու քաղաքաշինության
ընդհանուր բաժին
«24» 09 2013
Մուտք № 4851-13

Շամիրամ համայնքի

ղեկավար՝ Մ. Բրոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2013 թվական N 36

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ***համայնքի ավագանին որոշում է՝***

ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի 2013 թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -3

1. ՌՈՒՍՏԱՄ ԱԴԵՅԱՆ
2. ՏՈՍՈՒՆ ՔՅԱԼԱՇՅԱՆ
3. ՊՐԻՍԿ ՀԱՍԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2013թ. Սեպտեմբերի 13
գյ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2013 թվական N 37-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ

2013 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Մրազ Բրոյանի առաջարկությունը ***համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի 2013թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ -3

1.ՌՈՒՍՏԱՄ ԱԴԵՅԱՆ

2. ՏՈՍՈՒՆ ՔՅԱԼԱՇՅԱՆ

3. ՊՐԻՍԿ ՀԱՍԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2013թ. Սեպտեմբերի 13
գյ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔ

13 սեպտեմբերի 2013 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Բացակա էին ավագանու անդամներ՝ Սահիդ Օզմանյանը և Ռուստամ Շարոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր՝ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Թոսուն Քոչոյանը, հաշվապահ Ռուզաննա Հովսեփյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Բրոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիլիթ Փողիյանը

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ՓՈՂԻՅԱՆ/

ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի 2013 թվականի երրորդ եռամսյակում տեղական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով համայնքի ավագանին *որոշում է՝* Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի 2013 թվականի սեպտեմբերի 13 ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36 /

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱՋ ԲՐՈՅԱՆ/

2013 թվականի ապրիլի 22-ին ամսին գյուղապետարանը հայտարարել էր շրջանակային մրցույթ՝ խոտհնձիչ կոմբայն գնելու նպատակով: Մրցույթի արդյունքում հաղթող էր ճանաչվել <<ԱՍ Գրուպ>> ՍՊԸ –ն՝ ի դեմս տնօրեն Սուրեն Ասատրյանի: Նույն օրը կնքվել է գնման պայմանագիր (N ՀՀԱՄՇՊՀ –ՇՀԱԺՑՋ-13/4), որտեղ նշված է եղել խոտհնձիչ կոմբայնի մակնիշը՝ Fortschrit E 302 ՝ 6 688 000 ՀՀ դրամ արժողությամբ: 23.04.2013թ. ես՝ Շամիրամ համայնքի ղեկավար մրազ Բրոյանս և <<ԱՍ Գրուպ>> ՍՊԸ – ի տնօրեն Սուրեն Ասատրյանը այցելել ենք ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ համայնք ՝ ծանոթանալու խոտհնձիչ կոմբայնին: Սակայն տեղում ցույց է տրվել ոչ թե Fortschrit E 302 մակնիշի, այլ Fortschrit E 303 մակնիշի խոտհնձիչ կոմբայն, որն ավելի թանկարժեք է և էֆեկտիվ աշխատանքի առումով: <<ԱՍ Գրուպ>> ՍՊԸ – ի տնօրենի խնդրանքով գումարը նախապես փոխանցվել է ՍՊԸ-ի հաշվին ՝ 26.04.2013թ. N13 հանձնարարականով 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ և 30.04.2013թ. N 13 հանձնարարականով 688 000 (վեց հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ: Տնօրենը պարտավորվեց գումարի փոխանցումից հետո 15-օրյա ժամկետում կոմբայնը սարքին վիճակում ուղարկել համայնք: Սակայն մինչ օրս այն տեղ չի հասել ՝ առանց հիմնավորված պատճառաբանության: Այդ պատճառով հայց ներկայացրեցինք ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան 6 688 000 ՀՀ դրամ գումարի պահանջով և անհրաժեշտություն առաջացավ 2013 թվականի երրորդ եռամսյակի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ ՝ պահանջվող գումարի 2% չափով պետական տուրք փոխանցելու նպատակով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Մրազ Բրոյանի առաջարկությունը համայնքի ավագանին *որոշում է՝*

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին հանձնարարելու հաշվապահ Ռուզաննա Հովսեփյանին համայնքի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37 -Ն/

Ավագանու անդամներ

ՌՈՒՍՏԱՄ ԱԴԵՅԱՆ

ՏՈՄՈՒՆ ՔՅԱԼԱՇՅԱՆ

ՊՈՒՍԿ ՀԱՍԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Լիլիթ Փոդիյանը

2013թ. Սեպտեմբերի 13
գյ. Շամիրամ